



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

# ԿԱՆՈՒՅԻՆ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿԼՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



**GANTEGH**

BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE  
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MOTRÉAL

ՄԱՅՐ ՏԱՅԵՐ

ԿԻՐԱԿԻ, 29 Նոյեմբեր 2020

191

DIMANCHE, 29 Novembre 2020

Բ.Կիրակի Յիսսակի

2<sup>ème</sup> Dimanche de l'Avent



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

Website: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca) / E.mail: [saintgregorychurch@gmail.com](mailto:saintgregorychurch@gmail.com)

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

# Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ  
ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ  
ԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ (4.1-11)  
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (13.1-9)

## Les lectures de la Bible d'aujourd'hui

1 THESSALONICIENS: 4.1-11

LUC: 13.1-9

Պատարագիչ եւ քարոզիչ՝  
ԱՐՇ. Տ. ԴԱԻԻԹ ՔԶՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ  
Հոգեւոր Հովիւ

Célébration et l'Homélie  
RÉV. PÈRE DAVID MARGARYAN  
Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն -	9:30-ին
Office Matines à	9h30
Ս. Պատարագ- ուղիղ սփռում -	10:30-ին
La Sainte Messe – En direct à	10h30
Հոգեհանգստեան	
յատուկ պաշտօն - ուղիղ սփռում- Ժամը	12:00-ին
Spécial Office Réquiem - En direct à	12h00

DIACRES – ACOLYTES

Organist: M Vahram Sargsyan

Chœur “Gomidas”

# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS

## 1 ԹԵՍԱԼՈՆԻԿԵՑԻՆԵՐ 4.1-11

1Ուրեմս, եղբայրներ՛ր, կը թախանձենք ձեզի ու կը յորդորենք ձեզ Տէր Յիսուսով, որպէսզի՝ ինչպէս ընդունեցիք մեզմէ թէ ի՛նչպէս պետք է ընթանաք եւ հաճեցնէք Աստուած՝ ա՛լ աւելի ճոխանաք անոր մէջ, 2 քանի որ գիտէք թէ ի՛նչ պատուէրներ տուինք ձեզի՝ Տէր Յիսուսով: 3 Որովհետեւ Աստուծոյ կամքը՝ ձեր սրբացումն է, որ ետ կենաք պոռնկութենէ, 4 ու ձեզմէ իւրաքանչիւրը գիտնայ իր անօթին տիրանալ սրբութեամբ եւ պատիւով: 5 ո՛չ թէ ցանկութեան կիրքով, ինչպէս հեթանոսները՝ որ չեն ճանչնար Աստուած: 6 Ո՛չ մէկը թող չափազանցէ այդ բանին՝ մէջ ու կեղեքէ իր եղբայրը, քանի որ Տէրը վրէժննդիր է այդ բոլորին համար, ինչպէս մենք ալ նախապէս ըսինք ձեզի եւ վկայեցինք: 7 որովհետեւ Աստուած կանչեց մեզ ո՛չ թէ անմաքրութեան, հապա՝ սրբութեան: 8 Ուստի ա՛ն որ կ'անարգէ՝ կ'անարգէ ո՛չ թէ մարդ մը, հապա Աստուած՝ որ իր Սուրբ Հոգին ալ տուաւ մեզի:

9 Իսկ եղբայրսիրութեան մասին պետք չունիք որ գրեմ ձեզի, որովհետեւ դուք արդէն Աստուծմէ սորված էք սիրել զիրար, 10 եւ արդարեւ ասիկա կ'ընէք ամբողջ Մակեդոնիայի մէջ եղող բոլոր եղբայրներուն հանդէպ: Սակայն կ'աղաչենք ձեզի, եղբայրներ՛ր, որ ա՛լ աւելի ճոխանաք, 11 ու պատի՛ւ համարէք հանդարտ կենալ, ձեր գործերով զբաղիլ եւ ձեր ձեռքերով աշխատիլ, (ինչպէս պատուիրեցինք ձեզի,) որպէսզի դուրսինս-երուն հետ վարուիք վայելչութեամբ ու ո՛չ մէկ բանի՝ պետք ունենաք

## ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 13.1-9

1Այդ ատեն ներկայ եղողներէն ոմանք պատմեցին անոր այն Գալիլեացիներուն մասին, որոնց արիւնը Պիղատոս խառնեց իրենց զոհերուն հետ: 2 Յիսուս պատասխանեց անոնց. «Կը կարծե՞ք թէ այդ Գալիլեացիները աւելի մեղաւոր էին բոլոր Գալիլեացիներէն, քանի որ այսպիսի չարչարանքներ կրեցին: 3 Կ'ըսեմ ձեզի՝ ո՛չ: Հապա եթէ չապաշխարէք, բոլորդ ալ նոյնպէս պիտի կորսուիք: 4 Կամ թէ այն տասնութ հոգիները, որոնց վրայ Սելովամի աշտարակը ինկաւ եւ սպաննեց զանոնք, կը կարծե՞ք թէ անոնք Երուսաղէմ բնակող բոլոր մարդոցմէ աւելի յանցաւոր էին: 5 Կ'ըսեմ ձեզի՝ ո՛չ: Հապա եթէ չապաշխարէք, բոլորդ ալ նմանապէս պիտի կորսուիք»:

6 Սա՛ առակն ալ ըսաւ. «Մէկը իր այգիին մէջ ունէր տնկուած թզենի մը. եկաւ պտուղ փնտռելու անոր վրայ, բայց չգտաւ: 7 Ուստի ըսաւ այգեպանին. «Ահա՛ երեք տարի է, որ կու գամ՝ պտուղ կը փնտռեմ այդ թզենիին վրայ, ու չեմ գտներ. ա՛լ կտրե՛ գայն, ինչո՞ւ խափանէ գետիկը»: 8

Ան ալ պատասխանեց անոր. «Տէ՛ր, ա՛յս տարի ալ ձգէ զայն, մինչեւ որ բրեմ անոր շուրջը ու թրիք դնեմ: 9 Եթէ պտուղ տայ՝ լա՛ւ. այլապէս՝ յետագայի՛ն կտրէ զայն»:

### **1 Thessaloniens 4.1-11**

1Au reste, mes frères, nous vous prions donc, et nous vous conjurons par le Seigneur Jésus, que comme vous avez appris de nous de quelle manière on doit se conduire, et plaire à Dieu, vous y fassiez tous les jours de nouveaux progrès. 2Car vous savez quels préceptes nous vous avons donnés de la part du Seigneur Jésus. 3Parce que c'est ici la volonté de Dieu; [savoir] votre sanctification, et que vous vous absteniez de la fornication. 4Afin que chacun de vous sache posséder son vaisseau en sanctification et en honneur; 5Et sans se laisser aller aux désirs de la convoitise, comme les Gentils qui ne connaissent point Dieu. 6Que personne ne foule [son frère], ou ne fasse son profit au dommage de son frère en aucune affaire; parce que le Seigneur est le vengeur de toutes ces choses, comme nous vous l'avons dit auparavant, et comme nous vous l'avons assuré. 7Car Dieu ne nous a point appelés à la souillure, mais à la sanctification. 8C'est pourquoi celui qui rejette ceci, ne rejette point un homme, mais Dieu, qui a aussi mis son Saint-Esprit en nous. 9Quant à la charité fraternelle, vous n'avez pas besoin que je vous en écrive, parce que vous-mêmes vous êtes enseignés de Dieu à vous aimer l'un l'autre. 10Et c'est aussi ce que vous faites à l'égard de tous les frères qui sont par toute la Macédoine; mais, mes frères, nous vous prions de vous perfectionner tous les jours davantage, 11Et de tâcher de vivre paisiblement; de faire vos propres affaires, et de travailler de vos propres mains, ainsi que nous vous l'avons ordonné.

### **Luc 13.1-9**

1En ce même temps quelques-uns qui se trouvaient là présents, lui racontèrent [ce qui s'était passé] touchant les Galiléens, desquels Pilate avait mêlé le sang avec leurs sacrifices. 2Et Jésus répondant leur dit : croyez-vous que ces Galiléens fussent plus pécheurs que tous les Galiléens, parce qu'ils ont souffert de telles choses? 3Non, vous dis-je; mais si vous ne vous repentez, vous périrez tous de la même manière. 4Ou croyez-vous que ces dix-huit sur qui la tour de Siloé tomba, et les tua, fussent plus coupables que tous les habitants de Jérusalem? 5Non, vous dis-je; mais si vous ne vous repentez, vous périrez tous de la même manière. 6Il disait aussi cette parabole : quelqu'un avait un figuier planté dans sa vigne, et il y vint chercher du fruit, mais il n'y en trouva point. 7Et il dit au vigneron : voici, il y a trois ans que je viens chercher du fruit en ce figuier, et je n'y en trouve point; coupe-le; pourquoi occupe-t-il inutilement la terre? 8Et le [vigneron] répondant, lui dit : Seigneur, laisse-le encore pour cette année, jusqu'à ce que je l'aie déchaussé, et que j'y aie mis du fumier. 9Que s'il fait du fruit, [tu le laisseras]; sinon, tu le couperas après cela.



**ԱՂՈՅՔ ՍՈՒՐԲ ԽԱԶԻՆ՝  
ՉԱՐԷՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԵԼՈՒ ԶԱՄԱՐ**

Իմ անձս քու ձեռքերուդ մեջ է միշտ,  
եւ Սուրբ Խաչիդ կը յուսամ,  
թագաւոր երկնաւոր:

Քու սուրբերուդ բազմութիւնը  
որպէս բարեխօս ունիմ առջեւդ:

Դուն, որ կը մտածես ամենուս մասին,  
մի անտեսեր Քեզի ապաւինողները,  
այլ խաղաղութեան մեջ պահպանե  
պատուական եւ սուրբ Խաչովդ:

...Փրկէ տեսանելի եւ անտեսանելի թշնամիներէն:

Արժանի ըրէ գոհանալով փառք տալ Քեզի

Յօր եւ Սուրբ Գոգիի հետ,

այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

**PRIERE A LA SAINTE CROIX POUR ETRE  
PROTEGE DES MECHANTS**

Mon âme est toujours entre tes mains et, dans  
la sainte Croix, j'ai placé ma confiance, ô Roi du  
ciel. Je regarde la multitude de tes saints comme in-  
tercesseurs auprès de toi. O toi, le longanime envers  
tous, ne méprise pas ceux qui ont trouvé refuge en  
Toi, mais protège-les dans la paix avec ta précieuse  
et sainte Croix.

...Délivre-nous des ennemis visibles et  
Invisibles. Rends-nous dignes de te rendre grâces  
et de te glorifier avec le Père et le Saint-Esprit,  
maintenant et toujours et pour l'éternité de  
l'éternité. Amen.

# ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL



## ՀՈԳԵՀՎԼԳԻՍ ԿԻՐՎԿԻ, 29 ՆՈՅԵՄԲԵՐ 2020

Առաջնորդ սրբազան հօր թելադրանքով եւ նախաձեռնութեամբ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին եւ Ծխական Խորհուրդին հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի յանուն Հայրենիքի ազատութեան տեղի ունեցող Արցախի ճակատամարտին մեր քաջարի զինծառայող հերոսներու յաւէտ յիշատակին:

### Նորոգ հանգուցեալներ՝

- Ղուկասյան Արեն Արթուրի, ծնվ. 2002թ.
- Սազբանդյան Էդգար Նորայրի, ծնվ. 2002թ.
- Իսպիրյան Արմեն Նորիկի, ծնվ. 2002թ.
- Ստեփանյան Գարիկ Արայի, ծնվ. 2002թ.
- Դերձյան Արման Անդրանիկի, ծնվ. 2002թ.
- Ապերյան Անդրանիկ Արգամի, ծնվ. 2001թ.
- Հովսէփյան Վարդան Արթուրի, ծնվ. 2001թ.
- Չէյնայան Գառնիկ Նշանի, ծնվ. 2001թ.
- Խաչատրյան Մարատ Արթուրի, ծնվ. 2002թ.
- Կյուրեղյան Մկրտիչ Համլետի, ծնվ. 2000թ.
- Ժուռնոյան Սիփան Մարտինի, ծնվ. 2002թ.
- Պահեստագորային Սարգսյան Դավիթ Սասունի, ծնվ. 1990թ.
- Ասլանյան Ալբերտ Գեւորգի, ծնվ. 2001թ.
- Ղազարյան Արամ Արմենի, ծնվ. 2002թ.
- Կամավորական Խաչատրյան Համլետ Ռաֆայելի, ծնվ. 1978թ.
- Գրիգորյան Համլետ Արմենի, ծնվ. 2000թ.
- Պահեստագորային Ղազարյան Արամ Վարդանի, ծնվ. 1981թ.
- Մելքոնյան Սերոբ Վարուժանի, ծնվ. 1993թ.
- Պահեստագորային Սարյան Զաքիկ Հակոբի, ծնվ. 1990թ.
- Պահեստագորային Հակոբյան Պողոս Հայրիկի, ծնվ. 1971թ.
- Արամյան Սարգիս Սամսոնի, ծնվ. 1975թ.
- Պահեստագորային Գասպարյան Ռաֆայել Ռուստամի, ծնվ. 1991թ.

Պահեստագորային Մարտիրոսյան Էդուարդ Միշայի, ծնվ. 1992թ.

Ասլանյան Լեւոն Սերյոժայի, ծնվ. 1983թ.

Պահեստագորային Պետրոսյան Հարութ Ալեքսանդրի, ծնվ. 1990թ.

Պահեստագորային Ավագյան Սուրեն Սլավիկի, ծնվ. 1974թ.

Պահեստագորային Աղայան Լարեկ Մյասնիկի, ծնվ. 1994թ.

Պահեստագորային Համբարձումյան Ստեփան Սուրենի, ծնվ. 1965թ.

Պահեստագորային Խաչատրյան Արման Արիստակեսի, ծնվ. 1998թ.

Թարոյան Արտուշ Սեյրանի, ծնվ. 1985թ.

Աբրոյան Վահե Կարենի, ծնվ. 2001թ.

Մինասյան Արամ Հարությունի, ծնվ. 1980թ.

Պահեստագորային Խաչատրյան Խաչատուր Գուրգենի, ծնվ. 1982թ.

Գրիգորյան Գեղամ Գարեգինի, ծնվ. 2002թ.

Հովհաննիսյան Գեւորգ Լեւոնի, ծնվ. 1991թ.

Խաչատրյան Հայկ Հայկի, ծնվ. 2001թ.

Խաչատրյան Անդրանիկ Էդվարդի, ծնվ. 1993թ.

Լերսիսյան Տարոն Վարդանի, ծնվ. 1999թ.

Բաբոյան Աշոտ Արմենի, ծնվ. 2001թ.

Ավետիսյան Արմեն Աբրիկի, ծնվ. 1975թ.

Դավթյան Դավիթ Արմանի, ծնվ. 2002թ.

Սարգսյան Գուրգեն Փափագի, ծնվ. 1987թ.

Սարգսյան Վազգեն Մկրտչի, ծնվ. 2001թ.

Մարտիրոսյան Վրեժ Վրեժի, ծնվ. 2000թ.

Տոնոյան Գեղազնիկ Հաբետի, ծնվ. 1990թ.

Մելքոնյան Տիգրան Եղիշի, ծնվ. 1997թ.

Մելքոնյան Գեւորգ Միսակի, ծնվ. 1996թ.

Հարությունյան Հարություն Տիգրանի, ծնվ. 2002թ.

Ասրյան Լարեկ Լեռնիկի, ծնվ. 2001թ.

Աղաջանյան Էդգար Գագիկի, ծնվ. 2000թ.

Չոբանյան Նվեր Տիգրանի, ծնվ. 2001թ.

Վարդանյան Ավետիս Սլավայի, ծնվ. 2001թ.

Խալաթյան Աղվան Վալերիկի, ծնվ. 1996թ.

Առաքելյան Ժորա Արմենի, ծնվ. 2001թ.

Բաբայան Վահագն Վահանի, ծնվ. 1990թ.

Խաչատրյան Հովհաննես Վրեժի, ծնվ. 2000թ.

Մարտիրոսյան Միեր Կամոյի, ծնվ. 1989թ.

Սարգսյան Լարեկ Նուբարի, ծնվ. 1992թ.

Դալլաթյան Մանվել Սամվելի, ծնվ. 1995թ.

Հակոբյան Գրիգոր Համլետի, ծնվ. 1976թ.

Միքայելյան Վազգեն Լեւոնի, ծնվ. 1998թ.

Բաղայան Ռաֆայել Մնացականի, ծնվ. 1998թ.

Համբարձումյան Գոռ Կարապետի, ծնվ. 1998թ.  
Խաչատրյան Վահրամ Ժիրահայրի, ծնվ. 2002թ.  
Պահեստագորային Միրզախանյան Վարդան Սարգսի,  
ծնվ. 1993թ.

Ռաֆայելյան Դավիթ Արայի, ծնվ. 2001թ.  
Պահեստագորային Խաչատրյան Ղամբար Սպարտակի,  
ծնվ. 1980թ.

Հարությունյան Շալիկո Գոռի, ծնվ. 2001թ.  
Ֆռանգյան Նարեկ Գեւորգի, ծնվ. 2002թ.

Հոգիներուն ի հանգիստ



Տ. ԵԼ ՏԻԿ. ՏԵՂՎԻՏ ԵՆ ԱՐՄԵՄԻՍ ՖԻՉՂՐ  
Տ. ԵԼ ՏԻԿ. ՍԱՐԳԻՍ ԵՆ ԱՆՈՒՂ ՄԱՐԱՉՂԵԱՆ ԵՆ ՁԱԼԱԿՆԵՐՂ  
Տ. ԵԼ ՏԻԿ. ՉԱՐԵԻ ԵՆ ՌՈՒԼԱ ՄԱՐԱՉՂԵԱՆ ԵՆ ՁԱԼԱԿՆԵՐՂ  
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն  
իրենց սիրեցեալ ծնողաց, մեծ ծնողաց եւ

հարազատներուն՝  
**ԳԵՈՐԳ ԵՒ ԱՐԱՔՍԻ  
ՄԱՐԱՇԼԵԱՆՆԵՐՈՒ**

**(KEVORK & ARAXIE MARASHLIAN)**

Հոգիներուն ի հանգիստ  
Ինչպէս նաեւ՝

**ՍԱՐԳԻՍ ՄԱՐԱՇԼԵԱՆԻ  
(SARKIS MARASHLIAN)**

**ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՌԻՓՍԻՄԵ  
ՊՈՅԱԾԵԱՆՆԵՐՈՒ**

**(HAROUTIOUN & HRIPSIME BOYADJIAN)**

**ՅԱԿՈՐ ՄԱՐԱՇԼԵԱՆԻ  
(HAGOP MARASHLIAN)**

**ՄԱՐԹԱ ՄԱՐԱՇԼԵԱՆԻ  
(MARTHA MARASHLIAN)**

Հոգիներուն ի հանգիստ



Տ. ԵԼ ՏԻԿ. ՄԱՅՔ ԵՆ ՍՐԲՈՒԼԻ ԹԱՉՃԵԱՆ  
Տ. ԵԼ ՏԻԿ. ԱՆՊՐԱՆԻԿ ԵՆ ԻՐԻՆԱ ՍԱՅԵԱՆ  
Տ. ԵԼ ՏԻԿ. ԴԵՐԵՆԻԿ ԵՆ ԳԱՅԱՆԵ ՍԱՅԵԱՆ  
Տ. ԵԼ ՏԻԿ. ՓՕԼ ԵՆ ԿԱՐԻՆԵ ՀԱՆԷՆԵԱՆ  
Տ. ԵԼ ՏԻԿ. ՀՐԱՅՐ ԵՆ ԼԻՆԱ ՍԱՅԵԱՆ  
ԵՆ թոռները



հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ ծնողաց`

**ԹԱԳՈՒՅԻ**

**ՄԿՐՏԻՉԵԱՆ ՍԱՅԵԱՆԻ**

**(TAKOUHIE MEGUERDITCHIAN SAIYAN)**

Մահուան 40-ին առիթով

Ինչպէս նաեւ`

**ԿԱՐԱՊԵՏ ՄԱՐՏԻՐՈՍ**

**ՍԱՅԵԱՆԻ**

**(GARABED MARDIROS SAIYAN)**

մահուան 15-րդ տարելիցին առիթով:



Տ. եւ Տիկ. Ռոպէր եւ Ալեքսանտրա (Դաւիթեան) Աթարտեան

Օրդ. Անգիլնէ Աթարտեան

Պրն. Կիւսթէ Աթարտեան

հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն իրենց սիրեցեալ եղբոր եւ հօրեղբօր`

**ՄԱՐՍԵԼՕ ԱԹԱՐՏԵԱՆԻ**

**(MARCELO ATARDIAN)**

(մահացած Ուրուկուէյ)

Մահուան 40-ին առիթով



Կարինէ եւ Մարինէ Տէր-Ստեփանեաններու եւ իրենց

ընտանիքներուն,

խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի

իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ ծնողաց`

**ՅԱՍՄԻԿ ԵՒ ԳԻՈՐԳԻ**

**ՏԵՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆՆԵՐՈՒ**

**(HASMIG & GIORGY TER-STEPANYAN)**

Յոգիներուն ի հանգիստ:



Տիկ. Սիլվա Պէքարտեան Գարաօղլանեանի

խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի

իր սիրեցեալ

եղբոր եւ եղբոր աղջկան, հօր եւ մեծ ծնողաց`

**ՅԱԿՈՒ ՊԵՔԱՐԵԱՆԻ**

**(HAGOP BEKARIAN)**

Եւ

**ՆԱՅԻՐԻ ՄԱՐԻԱ ՊԵՋԱՐԵԱՆԻ  
(NAYIRI MARIA BEKARIAN)**

Մահուան 5-րդ տարելիցին առիթով  
եւ

**ՍԱՐԳԻՍ ՊԵՋԱՐԵԱՆԻ  
(SARKIS BEKARIAN)**

Մահուան 16-րդ տարելիցին առիթով  
Ինչպէս նաեւ

**ԽԱՉԱՏՈՒՐ ԵՒ ՄԱՐԻԱՄ  
ՊԵՋԱՐԵԱՆՆԵՐՈՒ  
KHATCHADOUR & MARIAM BEKARIAN)**

Յոգիներուն ի հանգիստ



Տ. եւ Տիկ. ԼԵՆՈՆ ԵՒ ԱՆՆԱ ԱՖԵՅԵԱՆԻ  
հնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի  
իրենց սիրեցեալ մօր եւ մեծ մօր`

**ԸԷԹԻ ՓԱՓՈՂՅԵԱՆԻ  
(KATHY PAPAŽIAN)**

Մահուան 17-րդ տարելիցին առիթով:  
Ինչպէս նաեւ`

**ՓԱՓՈՂՅԵԱՆ ԵՒ ԱՖԵՅԵԱՆ**

Գերդաստաններու համայն նկչեցելոց  
հոգիներուն ի հանգիստ



**Ննջեցեալներու համար աղօթք**

Ո՛վ բազմագութ Աստուած, կ'աղաչեմ եւ կը խնդրեմ Ըեզմէ մեր ազգին բոլոր հին ու նոր, հաւատքով եւ յոյսով ի Ըեզ ննջածներու համար: Մանաւանդ, Զու մօտդ ննջող իմ մարմնաւոր եւ հոգեւոր ծնողներուն, եղբայրներուն, քոյրերուն, ազգականներուն, սիրելիներուն, բարեկամներուն, բարիին մէջ կրթող հոգեւոր վարդապետներուն, նաւուցիչներուն, մեր բոլոր աշխատաւորներուն եւ երախտաւորներուն համար, որպէսզի Զու գալստեանդ մեծ օրը ողորմութեամբ յիշես եւ թողութիւն շնորհես անոնց բոլոր մեղքերուն ու սխալներուն եւ Զու աջակողմեան դասիդ սուրբերուն հետ դասես ու թոյլ տաս լսելու Զու երանաւետ խօսքդ, թէ՛ «Եկէ՛ք իմ Յօրս օրհնածները»: Եւ, ըստ մեզի հանդէպ անոնց կատարած երախտիքներուն՝ մէկի փոխարէն բիւրապատիկ յատուցես անոնց հոգիներուն, իսկ մեզի անոնց պարտքերէն անպարտ դարձնես:

Ըեզ փառք յաւիտեանս յաւիտեակց. Ամէն:

Սիմէն Կաթողիկոս  
Երեւանցի

# ՏՕՆԵՐ

Շաբաթ, 28 Նոյեմբեր 2020

**Սուրբ Առաքելներու եւ մեր Առաջին  
Լուսաւորիչներ Ս. Թադէոսի եւ Ս.  
Բարդուղիմէոսի Յիշատակութեան Օր**

Ս. Թադէոսը եւ Ս. Բարդուղիմէոսը Քրիստոսի անխոնջ 12 առաւելներէն էին, որոնք գալով Հայաստան՝ քրիստոնէութիւն քարոզեցին հայ ժողովուրդին՝ արժանանալով «առաջին լուսաւորիչներ» կոչման: Քրիստոնէութեան արշալոյսին անոնք Նահատակուեցան Հայաստանի մէջ: Առաքելներու գործունէութեան որպէս արդիւնք 301 թուականին հայ ժողովուրդը առաջինը հանդիսացաւ աշխարհի մէջ, որ քրիստոնէութիւնը հռչակեց իբրեւ պետական կրօն: Յիրաւի, այս սրբազան առաքելներու դերը կը կարեւորուի երկհազարամեայ հայ ժողովուրդին կեանքին:

Հայ Առաքելական Եկեղեցին սուրբ առաքելներու եւ մեր առաջին լուսաւորիչներու՝ Թադէոսի եւ Բարդուղիմէոսի յիշատակը կը տօնէ Յիսնակի Բ Կիրակիին Նախորդող շաբաթ օրը:



Saturday, November 28, 2020

**Commemoration of the Apostles St. Thaddeus  
and St. Bartholomew, the first preachers of  
Christianity in Armenia**

Apostles St. Thaddeus and St. Bartholomew were two of the twelve Apostles of Christ, who came to Armenia and preached Christianity in Armenia deserving the title “the first illuminators”. Still at the dawn of Christianity they were martyred in Armenia. It was the result of their preaching and martyrdom that the Armenian people, being the first nation in the world, proclaimed Christianity as the state religion. Indeed, Apostles St. Thaddeus and St. Bartholomew played an important role in the history of 2000-year-old Christian Armenian nation which has unshaken faith and keen love towards its Mother Church.

Each year a Divine Liturgy is celebrated in the Cathedral of the Mother See of Holy Etchmiadzin in the memory of St. Apostles.



## Շաբթուայ խորհրդածութիւններ



Քալէ պարզութեամբ Տիրոջ ճանապարհով, տանջակց  
մի պատճառեր հոգիիդ:  
Խօսիր ճշմարտութիւնը, միշտ ճշմարտութիւնը:  
Ս. Յայր Պիո

Walk in simplicity in the way of the Lord, don't cause your soul to suffer.  
Speak the truth, always the truth.  
St. Father Pio

Եթէ չես ուզեր տառապիլ, մեղք մի գործեր:  
Աշխատիր բոլորին հետ ապրիլ այնպէս, որ մարդիկ մխիթարուած  
հեռանան քեզմէ եւ քու պատճառովդ գոհութիւն յայտնեն Աստուծոյ:  
Յայր Նիկոն Վորոբյով

If you don't want to suffer, don't sin.  
Work with everyone to live comfortably leave you and thank  
God because of you.  
Father Nikon Varobyov

Յպարտութիւնը հոգիին հիւանդութիւնն է, խոնարհութիւնը՝  
առողջութիւնը, իսկ աղօթքը՝ անոր լաւագոյն դեղը:  
Սիմէոն Աթոսացի

Pride is the disease of the soul, humility is health,  
and prayer is the best medicine for it.  
Simeon Atosaci

Ան, ով բարի խորհուրդ կու տայ, մէկ ձեռքով կը կառուցէ:  
Ան, ով բարի խորհուրդ կու տայ եւ լաւ օրինակ կը ծառայէ,  
երկու ձեռքով կը կառուցէ:  
Ան, ով բարի խորհուրդ կու տայ եւ վատ օրինակ, մէկ ձեռքով կը կառուցէ,  
միւսով՝ իր տունը կը քանդէ:  
Յայր Գաբրիել Աթոսացի

He who gives good advice builds one hand.  
He who gives good advice and serves a good example builds with two hands.  
He who advises good advice and bad example builds with one hand, the other  
the house is being destroyed.  
Father Gabriel Atosian

## ՎԱՐԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

**Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ  
ՀԱՍՏԱՏՈՒՄԸ, ՆՇԱՆԱՎՈՒԹԻՒՆԸ  
ԵՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**



**Արդեօք Գիտեի՞ք թե՛.-**

**Որո՞նք են Ս. Մկրտության Նախատիպերը Հին Կտակարանին մեջ:**

Ինչպես Ընդհանրական այնպես ալ մեր Եկեղեցւոյ հայրերը հինկտարանական որոշ դրուագներուն մեջ տեսած եւ բացայայտած են Ս. Մկրտության թաքնուած խորհուրդը:

Հիմնականին մեջ անոնք են՝ **1. արարչագործության ժամանակ ջուրերուն վրայ Ս. Հոգիին շրջիլը** (ՅՆՆդ.1.2) խորհրդապատկերն է Ս. մկրտության: Ընդհանրական Եկեղեցւոյ մեջ տարածուած այս մեկնաբանութիւնը լայնօրէն կիրառուած է նաեւ մեր Եկեղեցական մատենագրութեան մեջ, որուն վարդապոյն վկայութիւններէն է 5-րդ դարու պատմիչ Ագաթանգեղոսի «Հայոց պատմութեան» մեջ մուծուած «Ս. Գրիգորի վարդապետութիւնը» երկին համապատասխան հատուածը (412-415): Նոյն ձեւով կը մեկնաբանեն սուրբգրային այս հատուածը Ս. Մովսէս Խորենացին (5-րդ դ.), Ս. Յովհան Օձնեցին (717-728), Տիմոթէոս վարդապետը (10-11-րդ դդ.), Ս. Գրիգոր Նարեկացին (10-11-րդ դդ.), Յովհաննէս Երզնկացի Պլուզը, Ս. Յովհան Որոտնեցին (1315-1386) եւ ուրիշներ:

**2. Նոյեան տապանը:** Ինչպէս արդար Նոյը եւ իր ընտանիքը մտան տապանին մեջ եւ փրկուեցան ցրիեղեղէն, այնպէս ալ Ս. Մկրտության ջուրը փրկարար է: Ս. Պետրոս առաքեալը կ'ըսէ. «**Այդ օրերուն քիչեր, այսինքն՝ ուրը հոգի փրկուեցան ջուրէն: Մկրտութիւնն ալ, ըստ Նոյն օրինակին, կ'ապրեցնէ ձեզի (ոչ թէ մարմնին կեղտը հեռացնելու համար, այլ որպէս մաքուր խիղճով յանձառութիւն առ Աստուած) Տիտուս Զրիստոսի յարութեան միջոցով**»

(Ա Պետ. 3.20-21), **3.Թլփատութիւլը:** Շատերուն կարծիքով՝ հինկտակարանեան թլփատութիւնը Նախատիպն է Ս. Մկրտության խորհուրդին: Թլփատութեան միջոցով Աստուած ուխտ կապեց Աբրահամի սերունդին հետ (ՅՆՆդ. 17. 11-14), իսկ Նոր Ուխտին մեջ այդ շարունակուեցաւ Ս. Մկրտության խորհուրդով (հմմտ. Կող. 2. 11-12, Գաղ. 3. 26-29): Ինչպէս ուր օրական մանուկներուն պէտք է թլփատէին, այնպէս ալ Եկեղեցին կը թոյլատրէ եւ կը խրախուսէ ութօրեայ մանուկներու Ս. Մկրտութիւնը, **4.Կարմիր ծովէն հրեաներուն անցումը:** Հրեաները Կարմիր ծովէն անցնելով, փրկուեցան եգիպտական գերութենէն: Այս անցումը կը խորհրդանշէ մեղքի ծառայութենէն փրկութեան անցումը, ուստի Ս. Պօղոս առաքեալը կ'ըսէ.

**«Եղբայրներ՛ր, չեմ ուզեր, որ անգիտանաք, որ մեր հայրերը բոլորն ալ ամպին առաջնորդութեան տակ էին, եւ բոլորն ալ ծովէն անցան, եւ բոլորը, հետեւելով Մովսէսին, մկրտուեցան ամպին եւ ծովին մեջ»** (Ա Կորնթ. 10. 1-20):

(Շարունակելի)

**ՆՈՒՐԱՏՈՒՌԻԹԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ**

**DON  
À L'ÉGLISE**



**DONATION  
FOR THE CHURCH**

**Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal,  
QC Donations of November have been received  
with great appreciation 2020**

**CHURCH:**

**ARTZAKH HUMANITARIAN FUND:**

Mr. & Mrs. Alain Tchaderjian \$250

**HOKEHANKISD:**

**THE LATE VARTUHI KANAR:**


Mr. & Mrs. Haig Kanar \$100

Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian \$50

**THE LATE BEKARIAN FAMILY:**

Mrs. Silva Bekarian Karaoghlanian \$70

**Օրհնեալ  
Կիրակի**



## Հայկական Խոհանոց / Armenian Kitchen

### Vegan carrot Cake

2 ½ cup flour or Gluten-Free all purpose flour  
½ teaspoon salt  
2 ½ teaspoon Baking powder  
1 teaspoon baking soda  
2 teaspoon cinnamon  
½ teaspoon nutmeg  
¼ teaspoon ginger  
2/3 cup brown sugar  
½ cup white caster sugar  
1 cup warm water  
2/3 cup vegetable oil  
2 teaspoon vanilla  
2 cups grated carrots  
¾ cup chopped nuts



### Method

Preheat oven to 350 F degrees.

Grease and flour the pan

Combine flour salt baking soda cinnamon nutmeg and ginger in a medium bowl. Set aside.

In a large bowl combine sugars, water, vegetable oil and vanilla. stir in the carrots and nuts.

Add the dry ingredients and mix well until blended. Pour the batter into the pan. Cover with foil and bake 30 minutes.

Remove foil and bake for 15-20 minutes more or until the centre is done.

Cool before frosting.

### Frosting (optional)


4 c powdered sugar

¼ cup water

½ teaspoon vanilla

Blend with a spoon until smooth and creamy.

Drizzle over cake.



**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ ՅԱՌԱԶԻԿԱՅ ՇԱՐԹՈՒՄՆ  
FÊTE DE L'ÉGLISE POUR LA SEMAINE PROCHAINE  
ՆՈՅԵՄԲԵՐ- NOVEMBRE**

30, Երկուշաբթի - Տօն Սրբոցն Գենարիոսի եպիսկոպոսին,  
եւ Մերկերիոսի զինաւորին, Յակովբայ եւ Իրաւափառայ:  
Lundi 30 – Fête du Saint évêque Génarios et du soldat Mercure,  
de Jacques et d'Iravapar.

**ԴԵԿՏԵՄԲԵՐ- DÉCEMBRE**

1, Երեքշաբթի – Տօն Սրբոցն Միւսասայ, Երմոզիւնեայ,  
Գրաբոսի, կամաւոր աղքատացն՝  
Յովհաննու եւ Ալէքսիանոսի:

Mardi 1 - Fête des saints Minas, Ermokin, Grabos,  
des pauvres volontaires Jean et Alexian

2, Չորեքշաբթի – Պահք:  
Mercredi 2 - Jeûne.

3, Հինգշաբթի – Տօն Սրբոցն Հարցն Եգիպտացոցն՝  
Պօղոսի, Պօղայ, Մակարայ, Եւագրի, Յովհաննու Գբնեցոյն,  
Յովհաննու Կարճահասակին, Նեղոսի, Արսէնի, Սիսիանու, Դանիէլի,  
Սրապիոնի, Մակարիոսի, Պիմէնի եւ այլոց սրբոց Հարցն:

Jeudi 3 – Fête des saints pères égyptiens, Paul, Pol, Macaire, Onuphre,  
Jean de Guepnets, Jean de Petit, Nil, Arsène, Sissian, Daniel, Serabion,  
Macarios, Bimène et autres saints pères.

4, Ուրբաթ - Պահք:  
Vendredi 4 - Jeûne.

5, Շաբաթ – Տօն Սրբոյն Նիկողայոսի

Չմիւռնագոյ սքանչելագործ Հայրապետին:

Յիշատակի օր՝ Կիւմրիի երկրաշարժի 30-րդ տարելիցին

Samedi 5 – Fête du saint Patriarche Thaumaturge, Nicolas de Smyrne.  
Commémoration du 30ème anniversaire du tremblement  
de terre de 1988



# Fundraising for our Church and Artsakh

Organised by Saint Gregory Armenian Apostolic church  
Parish council and ACYOC „Kamar,, youth union  
committee

## BAKE SALE

Sunday Nov 29 2020

From 11:00-15:00

Take out hot meals



Whole roasted chicken  
with baked potatoes



Meat Lasagna with  
Béchamel sauce



Celery salad with corn

## Appetizers and desserts

*As well as various kinds of home made  
pastries and biscuits*



Nazoug



Cheese pockets  
(Bereg)



Khachapouri  
(Halloumi and  
Mozzarella filled bread)



Gata



Napoleon



Eclair

For your orders plse call Parandzem  
(514)792-2866, Choghig (514)929-6272

Saint Gregory Armenian Apostolic Church of  
Montreal 615 Avenue Stuart

Outremont, QC H2V 3H2

Delivery in Montreal and Laval available for  
purchases over \$100

Masks are mandatory  
& keep 2 meter  
distance



**ՄԱՍՆԱԿՑԻՆԷ ՀԱՅՈՑ ԶԱԶԱՄԱՐՏԻԿՆԵՐՈՒՆ  
ՅԱՆՈՒՆ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻԻԷ ԵՒ ԱՐՑԱԽԻ  
ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ**

Մայր Հայրենիքի եւ ի մասնաւորի Արցախի դիմագրաւած դժնդակ իրավիճակներուն, համեստօրէն կը խնդրենք մեր սիրալիր հաւատացեալներէն, որպէս սփիւռքահայեր բերել մեր հնարաւորութիւններն ու ջանքերը մէկտեղելու վասն մեր Մայր Հայրենիքի եւ Արցախի փրկութեան եւ ազատագրութեան:

**Ձեր մասնակցութեան համար  
Կարելի է հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ եւ  
կամ հետեւեալ**

**անմիջական թիւերէն մէկուն՝**

Եկեղեցւոյ գրասենեակ (514) 279-3066  
Պատասխանատու անձերուն՝  
(514) 865-3911, (514)825-5612 եւ (514)792-2866:

Կարելի է այցելել նաեւ՝ Եկեղեցւոյ կայքէջը  
**Website: Saintgregory.ca կամ armenianchurch.ca –**  
Artzakh Humanitarian Fund

**Faire un don**



**Նուիրատուութեան դիմաց – ստանալ տուրքէ գերծ ստացագիր:**

Իւրաքանչիւր Հայորդի իր մասնակցութեամբ կ'արտայայտէ իր ազգային գիտակցութիւնն ու հայրենասիրական պարտաւորութիւնը ի գին հայրենի հողին փրկութեան:

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 - Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008

[stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



## ԱՄԵՆԱՄԵԱՅ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Ուղիղ հեռարձակում – En direct



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Շաբաթ, 28 Նոյեմբեր 2020**

Ժամերգութիւն - Երեկոյեան ժամը՝ 5-ին:

**«Ուստի կը յայտարարեմ ձեզի. «Ի՛նչ որ կը խնդրէք արօթօքով,  
հաւատացէ՛ք թէ պիտի ստանաք, ու պիտի ըլլայ ձեզի»  
(Ղուկ. 11:24):**

**Samedi, le 28 Novembre 2020**

Office du soir à 17h00.

**“C'est pourquoi je vous dis : tout ce que vous demandez en priant,  
croyez que vous le recevrez, et il vous sera fait”**

**(Marc 11 :24).**



**ՄՐՏԱԲՈՒՄ ՆՈՒՐԱՏՈՒՌԹԻՒՆՆԵՐ  
Ի ՆՊԱՍ  
ՄԵՐ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ  
ՊԱՅՇԱՌՈՒԹԵԱՆ**

Գիտակցելով այս օրերու դժուարութեան, համեստօրէն կը  
խնդրենք մեր սիրալիր հաւատացեալներէն, կատարել իրենց  
սրտաբուխ նուիրատուութիւնները այցելելով  
Եկեղեցւոյ կայքէջը [Website - Saintgregory.ca](http://Website - Saintgregory.ca)

**Faire un don**



Շնորհակալութիւն

**YOUR HEARTFELT DONATIONS  
FOR THE SUPPORT OF OUR CHURCH:**

Concerning the difficulties that we are facing to those days; we  
humbly ask our parishioners to remember St. Gregory the  
Illuminator Armenian Cathedral for the glory of our Church.


Your donations can also be made through:

[Church website – saintgregory.ca](http://Church website – saintgregory.ca) by:

**Faire un don**



Thank You!



## ՅՈՒՂԱՐԿՎՈՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱԶՄԱՎԵՐՊՈՒՄ



Այս յայտարարությամբ կը փափաքինք մեր հաւատացեալներուն ուշադրութեան յանձնել թէ՛ Յուդարկաւորութեան կարգի ծրագրաւորման պարագային, նախքան որեւէ այլ գործընթացի ձեռնարկելը, համեստօրէն կը խնդրուի առաջին հերթին հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ եւ ժամադրուիլ հոգեւոր հովիւին հետ խորհրդակցութեան համար, որպէսզի ճշգրտօրէն կատարուին այն նախաձեռնութիւնները, որոնք պիտի կիրարկուին ըստ հանգուցեալի ընտանեկան պարագաներու յարմարութեան իրավիճակին:

Անգամ մը եւս կը փափաքինք շեշտել, Եկեղեցւոյ ծառայութեան մատուցման կարեւորութիւնն ու առաջնահերթութիւնը, որպէսզի կարենանք պատշաճօրէն կիրարկել մեր Եկեղեցապատկան ծառայութիւնը, զերծ մնալով որեւէ թիւրիմացութենէ եւ անպատեհ շարժառիթէ, օրինակ՝ դիակիզումի պարագային, յուդարկաւորութեան կարգը կը մատուցուի նախքան հրկիզումը, այլապէս, հրկիզուած մոխիրին վրայ արտօնուած չէ յուդարկաւորութեան կարգ կատարել որեւէ մէկ ձեւով, ըստ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ծիսակատարութեան կանոններուն:

Յետեւաբար, մեր յորդորն է անմիջապէս կապ հաստատել Եկեղեցւոյ գրասենեակին հետ, հեռաձայնելով՝ (514) 279-3066 թիւին, կազմակերպելու յուդարկաւորութեան կարգին հետ առնչուող հարկ եղած կարգաւորումները:

ԵՎԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր  
Եկեղեցի  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ ԵՒ ԵՐԵԿՈՅԵԱԸ  
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Ուղիղ Հեռարձակում – Live



**Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal**



Հաւատք, Մեր, Լոյս  
Եւ Կեանք:

Ամեն Չորեքշաբթի

1 Հոկտեմբեր 2020 սկսեալ երեկոյեան ժամը 5:00-ին:

Արժ. Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեանի հետ:

MESSAGE SPIRITUELLE  
ET SERVICE DU SOIR

avec le R.P. David Margaryan

Chaque Mercredi

à partir du 1<sup>er</sup> Octobre 2020 à 17h00.

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները մասնակից  
ըլլալու Աստուածաշնչական նիւթերուն  
առցանց եկեղեցւոյ դիմատետրի էջով:

**Nous invitons nos chers fidèles à participer à ces séances  
d'interprétations bibliques via la page Facebook de l'Église.**

Հաճելի հոգեւոր պահեր կը մաղթենք մեր հետեւորդ  
հաւատացեալներուն:

**Nous souhaitons a nos fidèles des moments spirituels  
agréables.**

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/  
[stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



## ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Մեր հաւատացեալներուն կը յայտենեք, թէ համաձայն Քէպէք Նահանգի առողջապահութեան Նախարարին՝ Մոկթերէալի շրջանը վտանգուած է թագաժահիրի Covid-19 կարմիր գոտիի զգուշացման հանգրուանով, որուն որպէս հետեւեալք խմբային հաւաքակառուութեան թողարկման թիւը՝ կրճատուած է հասնելով **25 հոգիի**, եւ պարտադրուելով ձեռք առնել առողջապահութեան բոլոր քայլերն ու միջոցները:

Նկատի առնելով համաճարակի ներկայ ընթացքը **առժամաբար կը դադրեցնենք «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ, կատարուող բոլոր տեսակի հիւրասիրութիւններն ու հաւաքները մինչեւ Նոր տնօրինութիւն:**

Ձեզ կը մաղթենք առողջութիւն եւ ամենայն բարիք եւ յոյս կը յայտենեք, որ յառաջիկայի փոփոխութիւններու եւ այլ մանրամասնութիւններու պարագային գրաւոր ձեզ տեղեակ պահել:

### **Ձեր ձեռքէ ձեր յարգանքը՝ Նկատի ունենալով հետեւեալ պարագաները.**

1. Բոլոր այն անձինք, որոնք հիւանդանալու բարձր հակամետոութիւն ունին:
2. Ձեր անմիջական շրջանակին կամ ընտանիքին մէջ ոեւէ մէկը վարակուած է Թագաժահիր Covid-19-ով եւ կամ ունին հետեւեալ ախտանշանները՝

- Ձերմութիւն
- Հագ
- Կոկորդի ցաւ
- Հոտարութեան կամ համի զգայի պակաս

եւ կամ կատարած են Քէպէք Նահանգէն դուրս ճամբորդութիւն:


Ձեզ կը մաղթենք առողջութիւն եւ ամենայն բարիք եւ յոյս կը յայտենեք, որ յառաջիկայի փոփոխութիւններու եւ այլ մանրամասնութիւններու պարագային գրաւոր ձեզ տեղեակ պահել:

Կարելի է Նաեւ առջանց Նուիրատուութիւններ կատարել այցելելով  
Եկեղեցւոյ կայքէջը՝ [saintgregory.ca](http://saintgregory.ca)

**Faire un don**



ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՆԵՆԵԱԿ



## AVERTISSEMENT

Nous informons nos fidèles que selon le Ministre de la Santé et le Directeur de la Santé publique, la région de Montréal se trouve en zone rouge de la pandémie coronavirus Covid-19. Par conséquent le nombre de fidèles assistant aux offices religieux est limité à **25 personnes**. Compte tenu de l'évolution actuelle de la pandémie, **nous suspendons temporairement tous types de réceptions et rassemblements dans la salle « Vatché Hovsepien ».**

Nous vous souhaitons santé, bien-être et espérons vous tenir informé de tout changement futur ou d'autres détails.

### S'abstenir d'aller à l'église

- 1- Tous ceux qui ont un risque élevé de tomber malade.
- 2- Si quelqu'un dans votre environnement immédiat ou un membre de votre famille est actuellement infecté par le covid-19 et/ou présente les symptômes suivants :
  - Fièvre
  - Toux
  - Mal de gorge
  - Perte de l'odorat ou du goûtou a voyagé en dehors du Province de Québec

Vous pouvez également faire des dons en ligne en visitant le site web de l'église [saintgregory.ca](http://saintgregory.ca)


**Faire un don**



BUREAU DE L'ÉGLISE



# ԵԿԷՔ ՊԱՅԾԱՌԱՅՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ



Եկեղեցոյս պայծառութեան եւ առաքելութեան յարատեւման նախանձախնդիր մեր սիրելի հաւատացեալներ,

Միրով կը յայտնենք, թէ մեր եկեղեցին կարիքն ունի հետեւեալ իրերուն.-

- Օդորակիչի անհրաժեշտ սարքաւորման (Air Conditioner)
- Ս. Սեղանի ոսկեգոյն ասեղնագործ ծածկոց
- Հոգեւորականաց հողաթափեր
- Սկիհի ծածկոցներ եւ Աւետարանի բռնիչ
- Շուրջաններ
- Մեծ Պահրի կամ Աւագ շաբթուան յարդարանք (սեղան եւ ծածկոց)
- Յիսուս Մանկան մսուր
- Եկեղեցոյ տօնածառ
- Ճրագալոյցի եւ Տեառնդատաջի համար նախատեսուած դուրսի մովեր
- Ջրօրհնէրի Սափոր
- Ս. Խորանի 2 մեծ վարագոյր կարմիր եւ սև

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ մասնակից դառնալ եկեղեցոյ սուրբ առաքելութեան, հաճին կապ պահել եկեղեցոյ հովիին կամ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

*«Այս երկրի մէջ ցանկ' քու հացդ, որպէսզի երկնքի մէջ գայն հարիւրով պտուղ տուած գտնեն»:*

«Հոգեւոր հայելի»

Կանխայայտ շնորհակալութեամբ,  
Հոգեւոր Հովիւ եւ Մխական Խորհուրդ